ՀՀ Լոռու մարզպետ

Արթուր Նալբանդյանին

Դիմող՝

Հարությունովա Էլյոնորա

Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորիչ 21

Հեռ.՝ 077200559

Հարգելի պարոն Նալբանդյան,

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ թոռնիկներս Միքայել Արթուրի Սաքունցը և Լուսինե Արթուրի Սաքունցը սովորում են Վանաձոր քաղաքի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջին կից դպրոցում՝ բարձր առաջադիմությամբ:

2016թ. ապրիլի 11-ին ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպվել է «վերածնունդ» միջազգային 8-րդ մրցույթ-փառատոնը, որի շրջանակներում Միքայել Սաքունցը ճանաչվել է դափնեկիր՝ արժանանալով 2-րդ կարգի, իսկ Լուսինե Սաքունցը՝ 3-րդ կարգի:

Այնուհետև, 2016թ. հունիսի 9-10-ին ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքապետարանի կողմից իրականացվել է պատանի երաժիշտ-կատարողների «կոմիտաս» մրցույթը, որի վերաբերյալ տեղեկացել ենք այլ անձանց խոսակցություններից, ոչ թե քաղաքապետրանի մշակույթի և կրթության բաժնից: Իմանալով մրցույթի անցկացման մասին, մոտեցել ենք քոլեջի տնօրենին, որի միջամտությամբ թոռնիկներս հնարավորություն ստացան մասնակցելու մրցույթին, այնինչ նմանատիպ հարցեր կարգավորելը և կազմակերպելը և աշակերտներին տեղեկացնելը մեթոդիստի պարտականությունն է: Այս մրցույթի ժամանակ Միքայել Սաքունցը արժանանացել է առաջին իսկ Լուսինեն՝ երկրորդ կարգի մրցանակին:

Սույն թվականի մարտին Սարաջյանի անվան դպրոցում ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացվել է ԱՐՏ Մյուզիք 2016 յոթերորդ փառատոնը, որի վերաբերյալ բարձր առաջադիմություն ունեցող, առաջին և երկրորդ կարգի մրցանակների արժանացած թոռնիկներս չեն տեղեկացվել իրականացվող փառատոնի մասին և հնարավորություն չեն ունեցել մասնակցելու:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտք № ______________

2016թ. մայիսի 27-ին Վանաձոր քաղաքի 1-ին դպրոցում կայանալիք սոլֆեջո առարկայի թելադրության մասին տեղեկացել ենք այլ անձանց խոսակցություններից, իմանալով, որ անցկացվելու է թելադրություն մոտեցել ենք քոլեջի տնօրենին, ով թույլատրել է մասնակցել թելադրությանը:

2016թ. հունիսի 14-ին Երևանի Սարաջյանի անվան դպրոցում կայացել է համերգ, որին պետք է մասնակցեին Լոռու մարզում պատանի երաժիշտ-կատարողների «կոմիտաս» մրցույթին առաջին տեղ գրաված մասնակիցները, որի վերաբերյալ կրկին թոռնիկս՝ Միքայել Սաքունցը, որ այդ մրցույթում արժանացել էր 1-ին կարգի չի մասնակցել, քանի որ քոլեջի մեթոդիստը չի տեղեկացրել համերգի իրականացման մասին, որի արդյունքում թոռնիկս զրկվել է ներկայացված լինելու և ելույթ ունենալու իրավունքից:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե՝

- ինչ կարգով են անց կացվել 2016թ. մարտի ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացված ԱՐՏ Մյուզիք 2016 յոթերորդ փառատոնը և 2016թ. հունիսի 14-ին Երևանի Սարաջյանի անվան դպրոցում կայացած համերգը,
- ով է տեղեկացվել իրականացված փառատոնի և համերգի իրականացման վերաբերյալ,
- ով է ունեցել պարտավորություն իրականացվելիք փառատոնի և համերգի մասնակիցների ներգրավվման և համապատասխան քոլեջներում դրա վերաբերյալ աշակերտներին և նրանց ծնողներին տեղեկացնելու վերաբերյալ,
- ինչ կարգով և սկզբունքով և ում կողմից են ընտրվել 2016թ. մարտի ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացված ԱՐՏ Մյուզիք 2016 յոթերորդ փառատոնի և 2016թ. հունիսի 14-ին Երևանի Սարաջյանի անվան դպրոցում կայացած համերգի մասնակիցները,
- ինչ պատճառներով թոռնիկներս՝ Միքայել և Լուսինե Սաքունցները չեն իրազեկվել և չի մասնակցել 2016թ. մարտի ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացված ԱՐՏ Մյուզիք 2016 յոթերորդ փառատոնին և 2016թ. հունիսի 14-ին Երևանի Սարաջյանի անվան դպրոցում կայացած համերգին:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ

տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կից ներկայացնում եմ

1. Արվեստի պետական քոլեջի պատասխանի պատճենը:
2. Լուսինե և Միքայել Սաքունցների վկայականների պատճենները:
3. 29.06.2016թ. քաղաքապետարանից ստացված գրության պատճենը:
4. Միքայել Սաքունցի վկայականի պատճենը:

Դիմող՝ Է. Հարությունովա

28.07.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՊԱՏՎՈԳԻՐ

ՏՐՎՈՒՄ Է Վանաձորի Խալիբեկյանի անվան արվեստի պետական քոլեջի ուսումնա- ԴՊՐՈՑԻ լարային ԲԱԺՆԻ VII ԴԱՍԱՐԱՆԻ

ԱՇԱԿԵՐՏ (ՈՒՀԻ) Արփինե Մարգարյանին

ՊԱՏԱՆԻ ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ «ԿՈՄԻՏԱՍ» ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

առաջին ԿԱՐԳԻ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

10 ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ.
Ք. ՎԱՆԱՁՈՐ

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն
Մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» համահայկական հիմնադրամ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ
«Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» ՀԿ

Ministry of Culture of the Republic of Armenia
«Pyunik» Pan-Armenian Human Resources Development Fund
Gyumri Branch of Yerevan Komitas State Conservatory
«Renaissance» International Contest-Festival» NGO

## «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ VIII ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ
## ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ

## «RENAISSANCE» VIII INTERNATIONALCONTEST-FESTIVAL
## DEDICATED TO THE 25TH ANNIVERSARY OF ARMENIAN REPUBLIC INDEPENDENCE

# դափնեկիր
# laureate

*Լարային գործիքներ / String instruments*

**II ԿԱՐԳԻ DEGREE**

**տրվում է**
**is awarded to**

*Միքայել Սաքունցին, Ջութակ*
*ՀՀ, Լոռու մարզ, Վանաձորի Մ. Թավրիզյանի անվ. ԱՊՔ*
*Mikayel Sakunts, Violin*
*Armenia, Lori region, Vanadzor M. Tavrizyan SAC*

Մրցույթ-փառատոնի նախագահ
President of Contest-Festival
Լ.Ա.Սարգսյան
L.A.Sargsyan

Մրցույթ-փառատոնի համանախագահ
Co-President of Contest-Festival
Կ.Հ.Ավդալյան
K.H.Avdalyan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



# ՊԱՏՎՈԳԻՐ

ՏՐՎՈՒՄ Է Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի պետական քոլեջի ակորդեոն – ԴՊՐՈՑԻ լարային ԲԱԺՆԻ VI ԴԱՍԱՐԱՆԻ

ԱՇԱԿԵՐՏ (ՈՒՀԻ) Լուսինե Սաֆարյան

ՊԱՏԱՆԻ ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ «ԿՈՄԻՏԱՍ» ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

երկրորդ ԿԱՐԳԻ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ։

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

10 ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ.
Ք. ՎԱՆԱՁՈՐ

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն
Մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» համահայկական հիմնադրամ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ
«Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» ՀԿ

Ministry of Culture of the Republic of Armenia
«Pyunik» Pan-Armenian Human Resources Development Fund
Gyumri Branch of Yerevan Komitas State Conservatory
«Renaissance» International Contest-Festival» NGO

## «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ VIII ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ
## ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ

## «RENAISSANCE» VIII INTERNATIONALCONTEST-FESTIVAL
## DEDICATED TO THE 25TH ANNIVERSARY OF ARMENIAN REPUBLIC INDEPENDENCE

# դափնեկիր
# laureate

*Լարային գործիքներ / String instruments* **III** ԿԱՐԳԻ DEGREE

**տրվում է**
**is awarded to**

*Լուսինե Սաքունցին, Ջութակ*
*ՀՀ, Լոռու մարզ, Վանաձորի Մ. Թավրիզյանի անվ. ԱՊՔ*
*Lousine Sakunts, Violin*
*Armenia, Lori region, Vanadzor M. Tavrizyan SAC*

Մրցույթ-փառատոնի նախագահ
President of Contest-Festival
Լ.Ա.Սարգսյան
L.A.Sargsyan

Մրցույթ-փառատոնի համանախագահ
Co-President of Contest-Festival
Կ.Հ.Ավդալյան
K.H.Avdalyan

ՀՀ, ք. Վանաձոր,
Գր. Լուսավորիչի 21 տան բնակչուհի
Էլյոնորա Հարությունովային

Հարգելի տիկին Հարությունովա

Ի պատասխան ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանին հղված դիմումի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և << Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, հայտնում եմ.

1. Ձեր տաղանդաշատ թոռնիկները սովորում են ոչ թե արվեստի քոլեջում, այլ դրան կից դպրոցում , որի համար անչափ հպարտ ենք:

2. Արվեստի պետական քոլեջը մեթոդիստի հաստիք չունի, բնականաբար չունի նաև մեթոդիստ: Նելլի Պապանյանը Լոռու մարզի մեթոդ-կաբինետի նախագահն է, իսկ Ռուզաննա Թորոսյանը ՝ մարզի մեթոդիստը:

3. Տնօրենը տեղեկացրել էր Ձեր թոռնիկներ Միքայել և Լուսինե Սաքունցների մասնագիտության դասատու Սպարտակ Ջամվելյանին ՝ Էռնեստ Պիչիկյանի կողմից մարտի 2-ին Երևան քաղաքում կազմակերպվող << ԱՐՏ –Մյուզիք -2016>> մրցույթ- փառատոնի մասին, սակայն Ս. Ջամվելյանը նպատակահարմար չի գտել, որպեսզի իր սաները հաջորդաբար մասնակցեն այդ, և << Վերածնունդ>> մրցույթ- փառատոնին ՝ կատարման ծրագրերի տարբերությունները հաշվի առնելով:

4. Սարաջյանի անվան դպրոցում կայացած համերգի մասնակիցների ընտրությունը կատարվել է մեթոդ- կաբինետի անդամների կողմից ՝ նախապես մարզի արվեստի դպրոցներում կատարած հաճախակի լսումների արդյունքներից ելնելով:
Մարզում կան բազմաթիվ շնորհալի և տաղանդաշատ երեխաներ, սակայն նրանցից ընտրվել են 8 լավագույնները ( ըստ նախատեսված քանակի):

Տնօրեն Ա. Ասլանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


✉ 2001 ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22
E-mail: vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Հեռ. 374 322 2-26-48
Ֆաքս/ Fax 2-22-50


N 067/3747 29 հունիս 2016թ.

ԷԼԵՈՆՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀՀ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ,
Ք.ՎԱՆԱՁՈՐ,ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ 21

Ի պատասխան Ձեր 27.06.2016թ. թիվ 067/2767 դիմումի

Տեղեկացնում եմ, որ Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջը գտնվում է ՀՀ մշակույթի նախարարության և Լոռու մարզպետարանի ենթակայության ներքո: Վանաձորի համայնքապետարանը ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպած փառատոնի մասնակիցներին տեղեկացնելու հարցում որևէ պարտավորություն չի ունեցել: Ուստի Վանաձորի համայնքապետարանը չի տիրապետում Ձեր կողմից փնտրվող տեղեկատվությանը: Ձեր հարցումը կարող եք ուղղել ՀՀ մշակույթի նախարարությանը կամ Լոռու մարզպետարանին:

Հայտնում եմ նաև, որ Ձեր կողմից չեն պահպանվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գրավոր հարցմանը ներկայացվող պահանջները :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

*Կատ. Բաժնի պետ*
*Մարինե Գալստյան*
*0322 2-56-47*



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Մ. ԹԱՎՐԻԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻՆ ԿԻՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

# ՎԿԱՅԱԿԱՆ թիվ 7

Տրվում է սույնը Միքայել Արթուրի
Սաֆրոնյանին

առ այն, որ նա 2009թ. ընդունվել է երաժշտական
դպրոցի [illegible] բաժինը և ավարտել է
2016թ. լրիվ դասընթացը:

հետևյալ առաջադիմությամբ՝

1. Մասնագիտություն 10 (գերազանց)
2. Սոլֆեջիո 10 (գերազանց)
3. Երաժշտական գրականություն 10 (գերազանց)

Քոլեջի տնօրեն՝

Երաժշտական դպրոցի բաժնի վարիչ

Կ.Տ.

«7» հունիսի 2016թ.

[illegible] Էլեոնորա
Գրիգոր Լուսավորչի 28
Վանաձոր

28 JUL 2016

Ա. Նալբանդյանին
ՀՀ Լոռու մարզի մարզպետին
ք. Վանաձոր Հայքի
հրապարակ

R
RR202245810AM